ԱՐՄԷՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեկան 5 Ֆր. և կամ 2 րբլ. ոս. թղթդրմ.

Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 Ֆր., վեցամսեայն 10 Ֆրանգ և եռամսեայն 5 Ֆրանգ։

Բաժնեգիններըը կանխիկ կը վճարուին և Տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Զ ՏԱՐԻ ԹԻՒ 92

1891 ՅՈՒԼԻՍ 22

ՅՈՒԼԻՍ 10 (Հ. Տ.)

ՀԱՐԻՒՐԱՏԱՐԱԿՈՒԻՉ. ԽԵՐԹ. ՕրԵր

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։

Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։

Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։

Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՑՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Ն�պատակ եւ Միջոցներ

(Քաղուած կանոնագրէն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգութիւներ մտցնելու Թիւրքահայաստանի մէջ, Հայ ժողովրդի տեղական պէտքերին համաձայն։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ կաշխատի ներքին ոյժ գոյացնել Ազգին մէջ իւր աղատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիրը որ, բայց զանազան լուրեր տալէ իրրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և ընդհանուր Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։*

Յանիօք. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակցիլ կամ թղթակցիլ ուզողներն պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian

(FRANCE) Marseille

* Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպաստէ Արմենիա լրագրի հրատարակման։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐՄԷՆԻԱ,, Ի Է ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ

(1891 ՕԳՈՍՏՈՍ—92 ՅՈՒԼԻՍ)

Արմենիան կը հրատարակուի առաջիկայ տարեշրջանին մէջ միեւնոյն ուղղութեամբ և չաբաթն երկու անգամ, չորեքշաբթի և շաբաթ օրերն։

Տարեկան բաժնորդագինն է՝

Պարսկաստանի համար 5 ֆրանգ (գրեթէ 7 ղրան կամ 2 րուբլի ռուս. թղթադրամ)։

Եւրոպայի և այլ տեղերի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, 20 ֆրանք։

«Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամներէն անոնց համար՝ որոնք տարեկան 20 ֆրանգ Արմենիայի բաժնորդագին վճարելու անկարող լինելնին կը յայտնեն խմբագրութեան ուղղուած մի նամակով, 10 ֆրանգ։

Անոնք որ Պարսկաստանէն դուրս 5 բաժնորդ կը գտնեն Արմենիայի, մէկ օրինակ ալ ՁՐի կը ստանան, բայց պայմանով որ 6 թերթերն ալ մէկ տրար եղած մէկ անձի հասցէին ղրկուին։

Վեցամսեայ և եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին սոյն տարեշրջանի համար միեւնոյն հաշուով առանց տեւէ յաւելման։

Արմենիայի տնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐՆ ԿԱՆԽԻԿ ՊԷՏՔ Է ՂՐԿՈՒԻ։

Կը խնդրենք մեր բոլոր բարեկամներէ որոնք կը համակրին մեր գործի եռանդով ջանալ տարածել Արմենիան ամեն շրջաններուն մէջ ուր որ կրնան։ Ոչնչափ աւելի յաջողինք չատ տարածել մեր թերթ ամեն կողմի Հայերին մէջ, այնչափ աւելի չատ պիտի յաջողինք մեզ դաղափարակիցներ և ձեռնտուներ ստեղծել։ Մեր զօրութեան դաղտնիքը մեզ դաղափարակից Հայերը չատցունելուն մէջ է։ Պէտք է աշխատիլ տարածել Արմենիան նոյն իսկ անտարբեր համարուած Հայերին մէջ, նոյն իսկ մեզ հակակարծիք եղողներին մէջ. փորձը ցոյց կուտայ որ անոնք ալ հետզհետէ պիտի մօտենան մեզ, անդադար լսելով և վերջապէս համոզուելով ճշմարտութեան։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարեւոր ազդ. — Հանգուցեալ կաթողիկոսի բողոքագիրը. — Նամակ Ամերիկայի Միացեալ-Նահանգներէն (Նիւ Եորք). — Թիւրքիայի Հայերի Ազգային ժողովը.— Ափրիկէ աքսորուած Հայերը. — Հայեր ի Թիւրքիա. — Ազգային կտակ մը ի Մանջհսքըր. — Դադարիր, Մուսա՛ (ոտանաւոր).—Ընտիր խօսքեր.—Արմէնիայի պատասխանները. — Նոր հրատարակութիւններ.—Երկրաշարժ Փոքր Ասիայի մէջ. — Թիւրքիայի երկաթուղիները. — Յանուցումներ։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Հարկ կը համարինք յիշեցունել Ար. մենիայի բաժնորդներին որ եթէ ՁԸ ՓՈԽԱՆ վերանորոգել իրենց բաժնորդագրութիւն է տարեշրջանին համար՝ բաժնորդագինն կանխիկ ղրկելով, իրաւունք չեն ունենար յետոյ գանգատելու երբ նոր տարեշրջանի սկիզբն չստանակենք իրենց թերթ ղրկել. և երբ ժամանակ անցնելէ յետոյ ստանանք իրենց պատուէր, դուցէ չկարենանք նոր տարեշրջանի սկզբնական թիւերը ղրկել իրենց, ինչպէս այդ պատահած է ուրիշ անգամներ, որովհետեւ մենք որչափ բաժնորդ ունենանք տարեշրջանի սկիզբն, նոյնչափով թերթ կը տպագրենք։

ՀԱՆԴՈՒԻՑԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲՈՂՈՔԱԳԻՐԸ

Կրթական և եկեղեցական վարչական խնդիրներուն առթով ռուս կառավարութեան արած անտեղի պահանջները հերքելու համար հանգուցեալ Մակար կաթողիկոսի գրած վերջին պաշտօնագիրը՝ որի մէկ պատճէնը առաջին անգամն լինելով հրատարակուեցաւ յուլիս 4ի (յունիս 22) Արմենիային մէջ, եւրոպական լրագիրներուն մէջ թարգմանուած լինելով, Կ. Պօլսի լրագիրներն ալ ֆրանսերէնէ հայերէն աշխարհաբարի թարգմանելով արտատպած են «Ռըվիւ տ'Օրիան» թերթէն, որ Թիւրքիոյ բարեկամ մի թերթ է։

Կ. Պօլիս եղած այդ հրատարակութեան մէջ կը տեսնենք որ, բացի մի քանի անճշդութիւններէ որոնք զանազան լեզուներէ հայերէն աշխարհաբարի փոխադրութեան հետեւանքն եղած են, թիւրք կառավարութիւնն ալ գրգիռած է նաեւ այն տողերի հրատարակութիւնը որոնք Տաճկաստանի Հայերի քաղաքական չարժման կը վերաբերին։

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ

Նիւ-Եորք, 5 յուլիս 91

ՅՈՒԼԻՍ 4Ը

Ահա Ամերիկացւոց ամենանուիրական օրը։ Միացեալ Նահանգաց անկախութեան 114րդ տարեդարձի օրն էր. ժողովրդեան համար ասկէ աւելի մի սիրելի օր չկայ։ (Աստ պէտք է նկատի առնել որ կրօնական տօներէն ոչ մին կը պահուի աստ, բայց ի Քրիստոսի ծննդեան օրէն որ ընդհանուր ժողովուրդը կը պահէ. իսկ գալով միւսներուն, որովհետեւ բոլոր ժողովուրդը բազմաթիւ տարբեր ազգերէ կը բաղկանայ որոնք ընդհանրապէս խառն կաշխատին միատեղ բոլոր վաճառատանց, խանութներու և գործարաններու մէջ և մէն մի վաճառատան կամ գործարանի մէջ իւրաքանչիւր ազգութեան մի փոքր մաս կը կազմեն, չէ կարելի իւրաքանչիւր մասնաւոր տօնին համար վաճառատունը փակել կամ գործարանը դադրեցնել. ուստի սովորական դարձած է իւրաքանչիւր ազգի մասնաւոր կրօնական տօները ձգելով, միայն երկրի տօները պահել, որպէս են ներկայ անկախութեան օրը, վասն հայրենեաց նահատակաց մեռելոցի օրը՝ 10 մայիսը և այլ սոյա նման 1–2 տօներ ալ)։ ժողովուրդը կը սիրէ այդ օրը, որովհետեւ 114 տարի առաջ այդ օրը ճիշդ իրենց նախահարք անկախութիւն ըստացած էին. այդ օրուընէ սկիզբ առաւ երկրի արդի ծագկեալ վիճակն, այդ օրուընէ չնչեցին ազատ շունչ և այդ օրուընէ ծագումն առաւ իրենց արդի քաղաքական յառաջդիմութիւնն և զարմանալին եւս այն է որ ժողովուրդը այս օրը դար մը վերջ կրկին նոյն միջոցով կը տօնէ, որմով կարողացած էր իր անկախութիւնը ձեռք ձգել դար մ'առաջ։ Միացեալ Նահանգաց անկախութիւնը ոչ լայց ու արտասուքով և ոչ եւրոպայի այս ու այն տէրութիւններուն դիւանագիտական դիմումներ անելով յառաջ եկաւ, (ինչպէս մեր Հայերէն մաս մը կը խորհին) այլ ընդհակառակ սրով և հրով միայն կարողացաւ իր ազատութիւնը ձեռք բերել առաջնորդութեամբ ճօրճ Վաշինկթընի որ մէկ կողմէն կը մաքառէր լացող ու դիմումներ անող կուսակցութեան դէմ, իրենց աշխատու-

ՎԱՂՎԱ ՄԱՐԶԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹԻՒՆ

ՎԱՂՎԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹԻՒՆ

(Շար. 91րդ թուէն եր վերջ)

Վաղվայ Կիրակի, Մայիս 15-ին, Վաղվայ Մարզային Կոմիտէի Հանդիսաւոր Արտահայտութիւնը պիտի կատարուի Ս. Ե. Միութեան

և ի հակափորձին, ոչ մէկ երեսփոխան հակառակ քուէ տուաւ։

Ս. Պատրիարքն.—Ինձի համար չատ վիրաւորիչ և սրտակէզ դէպք մը տեղի ունեցաւ։ Կը ցաւիմ որ երեսփոխանական ժողովոյ մէջ գտնուեցաւ մէկը որ ազապիսի վարմունք մը ունեցաւ։ Ըսող եղաւ թէ Վարչութիւնն իւր առեանը կանչելու էր Սուրբենեան Էֆն, բայց ժամածելու է թէ ինքը իւր ծանուցեալ ամբաստանութիւնն ընդէ առաջ ինչո՞ւ չդիմեց Վարչութեան և ուղեց յանկարծակիի բերել զմեզ։ Եթէ կանչէինք իսկ, պիտի ըսէր թէ երեսփոխանական ժողովոյ մէջ կրնայ դատուիլ։

Առենապետ Էֆ.—(Խօսքն առ Ս. Նախագահն ուղղելով) Սրբազան Հայր իմ, ծանր են առաջ բերուած իրողութիւնք. ծանր է տրամադրուած պատիժը. բայց ամենուս սիրտը հանդարտ է, վասն զի Ձեր Սրբազնութեան վկայութիւնն իսկ հաստատած է այդ իրողութեանց ստուգութիւնը։

Ս. Նախագահը.—Այո՛, իրողութիւնն իրողութիւն է։ Անկեղծապես կըսեմ թէ իմ սրտիս վրայ չատ ծանր տպաւորութիւն ըրաւ այս դէպք։ Կը փափաքիմ և կաղօթեմ որ այլ եւս չը կրկնուի։

Ս. Նախագահն յայտնապէս խռովեալ էր այս խօսքերն արտասանած պահուն։

Առենապետ Էֆ. ժողովին հաղորդեց նաեւ երեսփոխան Յակոբ Գուրգէն Էֆ.ի կողմէ առ Ս. Պատրիարք Հայրն ուղղեալ նամակ մը, որով կը յայտարարէր թէ արտաքոյ ազգային չրջանակի եղած ձեռնարկին մէջ ինք մասնակցութիւն չէ ունեցած բնաւ։

Այս նամակ յղուեցաւ Վարչութեան որպէս պի քանի որ Սուրբենեան Էֆ.ի վրայ հաստատուած իրողութեանց մէջ կատած կայ թէ մի քանի երեսփոխանք եւս ընկերացած են, այս մասին կատարուելիք քննութեանց մէջ որոշուի նաեւ Գուրգէն Էֆէնտիի դերը։

Վսեմ. Նուբեան Էֆ.—Այս խնդիրը փակուելու պահուն, կուզեմ վերջին խօսք մը արտասանել ի դիւանէ։ Պահ մը առաջ կարդացուած պաշտօնագրէն և անոր յաջորդող վիճաբանութենէն հասկցուեցաւ թէ նոյն իսկ մեր ժէջէն ըրպարտութիւն եղած է Ազգին և իր պաշտօնէից դէմ, բայց միեւնոյն ժամանակ մի անգամ եւս յստակօրէն ի վեր ելաւ մեր Վեհ. Սուլթանին արդարակորով բարձր միտքն և հայրական անդին գորովն՝ իր հաւատարիմ հայ հպատակաց նկատմամբ։ Ստոյգ է թէ նախորդ նստի առաւօտուն պաշտօնագիր մը եկած էր ի Պատրիարքական, սակայն Ս. Պատրիարքը կրցաւ իսկոյն պէտք եղած դիմումն ընել կասեցական կառավարութեան մօտ և ջրել ամեն կասկածանք։ Նոյն իսկ այս իրողութիւն նոր և փայլուն ապացոյց մըն է Ն. Կ. Վեհափառութեան արդարադատութեան և իմաստութեան՝ որով իրը լուսաւոր աստղ մը կը փայլի ամենի վրայ։ Կեցցէ ուրեմն Վեհ. Սուլթանն։

Բոլոր երեսփոխանք յանկարծ ջերմագին ծափահարեցին Վսեմ. Առենապետ էֆէնտիի այս խօսքերուն։ «Կեցցէ Վեհ. Սուլթանն» գոչելով։

Ապա քառորդ ժամ դադարի համար առեանը փակուեցաւ։

ԱՓՐԻԿԷ ԱՔՍՈՐՈՒԱԾ ՀԱՑԵՐՆ

Պէնկազիէն կը գրեն մեզ յունիս 30/12 յուլիս թուով։ «Վերջերս Ափրիկէ աքսորուած երեք անձեր՝ Տրապիզոնցի Տիար Մէրիմեան, Սեբաստացի Տ. Մոմճեան և մի ուրիշ երրորդ Հայ, որոնք Պէնկազի վար դրուած էին առժամանակեայ կերպով, նոյն օրը օսմանեան Մահսուսէի Ընկ. «Փարս» չոգենաւով ճամբայ հանուեցան Պէնկազիէն, Տըրիպոլիս ղրկուելու համար։ Ցայսմն չէ առայժմ թէ այնտեղ պիտի մնա՞ն թէ ոչ ներսեր պիտի աքսորուին։ Աւելի հաւանական է որ նահանգի կեդրոնը մնան։»

— Կ. Պոլսէն կը գրեն մեզ յուլիս 3/15 թուով թէ ամէն 3½ տարի առաջ բանտարկուած և յետոյ Ափրիկէի Տրիպոլիս քաղաքն աքսորուած երկու Եւդոկիացի Հայերն, Տ. Կարապետ Աբգարեան և Տ. Գէորգ Փասպանեան, ազատուեր են աքսորէն, Սուլթանի Պալատէն ուղղակի Տրիպոլսի կուսակալին տրուած հեռագրական հրամանին վրայ։

ՀԱՑԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Կ. Պոլսի Ազգային Կեդրոնական վարժարանի ուսումնական ծրագրի հնգամեայ չրջանը այս տարի ամբողջացած լինելով, 18 չրջանաւարտ աշակերտներ հանած է որոյմէ 13ը Կ. Պոլսեցի և 5ը դաւառացի են։ Քննութիւնները որ աւարտած են յունիս 29/11 յուլիսին, կատարուած են կառավարութեան Մէարիֆ ժողովի և մեր ազգային կրօնական ժողովի և Ուսումնական Խորհրդի ներկայացուցիչներին և այլ հրաւիրուած ուսեալ անձերի ներկայութեամբը։

— Ազգային ժողովին նախորդ Առենապետներէն Մեծ. Բրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան որ իր հիւանդութեան պատճառաւ Փրկչեան Ազգային Հիւանդանոցը փոխադրուած կը գտնուի այնտեղ, Կ. Պոլսի լրագիրներուն գրածին նայելով, իր մարմնական կարողութիւններուն հետ մտաւորական կարողութիւններն ալ սկսեր է կորնչցունել այժմ։ Մերունազարդ Բրիստոստուր էֆէնտին մեր ազգային երկարժամանակեայ գործիչներէ մին է և Թիւրքիոյ Հայերին մէջ կիրակօրեայ դասախօսութիւններ հաստատող «Անձնուէր» ընկերութեան ամենէն եռանդոտ և յարատեւող հիմնադիր անդամն է։

— Կ. Պոլսի Սամաթիա թաղի Ս. Սահակեան վարժարանի Սանուց ընկերութիւնն իր հիմնադրութեան 23րդ տարեդարձի առթիվ մի չքեղ հանդէս կատարեր է յունիս 30/12 յուլիսի կիրակի օր Ս. Փրկչեան Ազգային Հիւանդանոցի պարտիզին մէջ։ Ձմեռնակից եղած են 300էն աւելի անձեր։ Բաժակաճառներ խօսուած և երգեր երգուած են։ Հանդիսին նախագահած է Գեր. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան որ նոյն առաւօտ այդ հանդիսի առթով պատարագ մատուցեր է Ազգ. Հիւանդանոցի մատրան մէջ։

ԱԶԳԱՑԻՆ ԿՏԱԿ ՄԸ Ի ՄԱՆՉԷՍԹՐ

Այս վերնագրի տակ կը կարդանք Աբեւելքի մէջ հետեւեալը։

Շահեկան լուր մը կուգայ մեզ Մանչէսթրէ։ Հանգուցեալ վաճառական Պ. Մարքօ Օլիվօ աւելի քան քառորդ դար յառաջ ամուսնացած էր հայ-հռոմէական օրիորդի մը հետ։ Պարոնն ինք թէեւ Խրուադ էր, ծնած լինելով ի Դալմատիա ընդ ազատրեան իշխանութեամբ, և յետոյ բրիտանեան հպատակութիւն ընդունած, բայց կը պատմէր թէ իւր պապ Հայ էր. և ինքն ալ, հռոմէադաւան լինելով (իբրեւ Խրուադ), հայ-հռոմէական աղջիկ մը կնութեան առած էր։ Պ. Օլիվօ ուրիշ կերպիւ ալ ի յարաբերութեան կը գտնուէր Հայոց հետ, մանաւանդ Իզմիրի Հայոց հետ, ուր ընտանեկան կապեր ունէր Տիկին Օլիվօ։ Սպարթալեան տան Մանչէսթրի ճիւղին ընկեր էր Պ. Օլիվօ։ Իւր մահուամբ աւելի քան 200,000 անգլ. ոսկւոյ հարստութիւն մը թողած էր, յորմէ կարեւոր բաժին մը ստացաւ իւր կինն։ Սա եւս մեռած պահուն, իւր գրէթէ բովանդակ հարստութիւնն, իբր 35 հազար ոսկի, կտակեց Կեսարացի Պոլսեբնակ լուսաւորչական ընտանեաց Մեծ. Աբրահամ էֆէնտի Կիւմիւշեանի որուն հետ բարեկամական յարաբերութիւններ հաստատած էր ի Մանչէսթր, մտերիմ լինելով Տիկին Կիւմիւշեանի հետ (Օր. Աշնիւ Գավանոզեան)։ Հանգուցեալ Տիկին Օլիվօ նոյն կտակաւ նաեւ 500 ոսկի նուիրած էր Ս. Փրկչեան Ազգային Հիւանդանոցին Եմիգուլէի։ Արդ, հանգուցեալ Տիկնոջ ազգական հայ-հռոմէական ընտանիք մը այս կտակին վաւերականութեան դէմ դատ բացած լինելով անգլիական դատարանին առջեւ, անցեալ չաբթուն մէջ եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ դատը չահուած է Կիւմիւշեան ընտանեաց կողմէ, և 500 ոսկին ալ պիտի վճարուի Ս. Փրկչի Հիւանդանոցին։ Կը յուսացուի որ այս առթիւ կտակընկալներն եւս իրենց կողմէ նուէր մ'ընեն նոյն բարեգործական հաստատութեան։ Ամեն գովեստ գեր ի վեր է այս հայ-հռոմէական տիկնոջ ընթացքն, որ օտարութեան և հեռաւորութեան մէջ չէ մոռցած այն ազգութիւնն որուն կը պատկանէր, և այն մարդասիրութիւնն որ իւր վերջին ժամերուն մէջ իրեն յիշեցուցած է Ազգիս մարդասիրական մեծագոյն հաստատութեան նպաստ մ'ընելու պէտքը։

ԴԱԴԱՐԻ՛Ր, ՄՈՒՍԱ՛...

Դադարի՛ր, Մուսա՛, մատերով թեթեւ
Շարժել քընարիս լարերը քընքոյշ,
Ո՛հ, էլ չեմ կարող ես այսուհետեւ
Լըսել սիրային երգերըդ անոյշ։

Մոռացի՛ր նաեւ սըխուր մեղեդիք
Երգելառ թըշուառ խըղճուկ հայ աչխարհ,
Եւ խեղճ եղբօրըս տըրտունջը մեղմիկ
Եւ կոյս քըրոջըս գանգատը արդար։

Էնդուր որ, Մուսա՛, ժոտիկ է ժամը
Պոկել մեր ոտքից թշնամու չղթան,
Որ համոզված է արդէն խալամը,
Հայը չէ՛ իրա կուլ տալու թիքան։

Էնդուր որ Հայը, դարերով քնած,
Եկաւ վերջապէս այն համոզմունքին
Թէ առանց կռուի, արիւն չի թափած,
Ներ չէ հասնելու իւր նպատակին։

Էնդուր որ չուտով գոռոցը ահեղ
Ազնալու փայլուն հըրացաններից,
Պիտ' չարագուչակ բուի ձայնի տեղ
Լսվէ Հայոց տուրք աւերակներից։

Դէհ, Մուսա՛, դու էլ տո՛ւր քիչ նեղութիւն
Քո փափուկ, քընքոյշ ճերմակ մատերին.
Զարկի՛ր քընարիս հաստ հաստ սիմերին
Այսուհետ երգի՛ր միշտ ազատութիւն։

ԻՂԱԶ

Բագուս
1890 ամի 29 հոկտեմբերի

ԸՆՏԻՐ ԽՕՍՔԵՐ

Առանց աղի ոչինչ է ամենապատուական կերակուրը և առանց բարոյականութեան մեռած է ամենագիտուն մարդը։

Ծուցամոլ, ծոյլ և չարլաթան անձինք ազգի համար ցեցեր են, որք պիտի ուտեն նրան մինչև որ ուժից ընկնին։

Զգիտենք թէ օրը ի՛նչ պիտի ծնի, վասնորոյ պէտք է որ միշտ զգաստ լինենք։

Ուր չկայ փոխադարձ հաւատարմութիւն, անդ չկայ սէր և միութիւն։

Մինչեւ մի կողմի վրայ չհաստատուիս, միւսը մի՛ թող. որովհետեւ երկուսի միջում պիտի ոչնչանաս։

Քանի որ օդը խաղաղ է լինում, մեղուներ երեւան են գալիս և թռնատուում մարդկանց. իսկ փոթորկի ժամանակ միայն ծայռեր են երեւում։

Խենթի համար աչխարհ միշտ փոթորիկ է։ Անհիքալ

ԱՐՄԷՆԻԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

*** Լիս.— Շնորհակալութեամբ ստացած ենք Ձեր ղրկած «Գարատուղհին» հայրենասիրական վէպը։ Որովհետեւ 3 թերթ միայն մնացած է Արմենիայի Զ տարեշրջանը ստանալու, և տարեշրջանի թիւերէն կըսկսինք այդ հետաքրքրաշարժ փոքրիկ վէպ հրատարակել «Բանասիրական»ի բաժնին մէջ։

*** Է.— Ո՛ւր էք այժմ, ի՞նչ կանէք. վաղուց է որ ձեզնէ ձայն չկայ։

Նոր հրատարակութիւններ

Շնորհակալութեամբ ստացած ենք Արմենիայի խմբագրութեան ղրկուած հետեւեալ հրատարակութիւնները։

1. Taina Botezului la Armenii ortodoxi si origina cuventului insotita de situatia Armeniei de Protoiereu H. K. Moscofian, Parohul Bisericei Armene si, Cavaler al ordinului Coroana Romanei. Bucuresci, Tipografia Centrala Fratii Popescu, Calea Calarasilor No. 1 (Պուքրէշի Հայոց ժրաջան քահանայ Արժ. Տ. Խ. Մոսկոֆեանի՝ որ այլ և այլ տեսարակներ հրատարակելով կը ջանայ ռումէն ժողովրդին ծանօթացունել Հայաստանեայց եկեղեցւոյ անարատ ուղղափառութիւնը, վերջերս հրատարակած մի նոր տետրակն է. կը խօսի Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ կատարուած Մկրտութեան Խորհրդին վրայ, Հայ ազգի ի՞նչպէս յառաջ եկած լինելուն և Հայաստանեայց դրութեանը վրայ։ Ռումէն լրագիրները շատ գովեստով գրած են այս տետրակի մասին։ Գինն է 50 ասնթիմ։ Ըստանալ ուղղոները պէտք է դիմեն Արժ. Հեղինակին Պուքրէշ։)

2. MINASSE TCHÉRAZ (Professeur d'armenien à l'Ecole des études orientales modernes)—«Les Yézidis», étudiés par un explorateur arménien (*Պր. Կիրակոս Դաշնաճեանին Արեւելեան Մահուղի մէջ եզիտիներուն վրայ գրած հետաքրքրական տեղեկութիւններն են որ Պր. Մ. Չերազ ֆրանսերէնի թարգմանած է Եւրոպացիներուն ծանօթացնելու համար։*)

3. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ, Բանաստեղծութիւններ։ Հրատարակեց Ռ. Թանաս Ժամհարեան։ Կը բաղկանայ 168 երեսներէ և կը պարունակէ 102 ոտանաւոր բանաստեղծութիւնները զանազան նիւթերու վրայ։ Ընտիր թղթի վրայ և մաքուր կերպով տպագրուած է Մանուկա Մկրտիչ Բարխուդարեանի տպարանը։

4. Ա. ՆԱՄԱԼԵԱՆ. Ա. Հարեւանիներ. գինն է 3 կոպէկ։ Բ. Միևասի եզր. գին 3 կոպէկ։ Դ. եզիդ աղջիկը. գին 3 կոպէկ։ Դ. Նոհազհաճ կեանքը. գին 3 կոպէկ։ ե. Ծանր քարը. գին 3 կոպէկ։ (1–2 *թերթերէ բաղկացած այս փոքրիկ տետրակները կը ներկայացնեն մեր ընկերական կեանքէ զանազան գիծեր որոնք Թիֆլիսի Մուրձ ամսագրին մէջ հրատարակուելէ յետոյ, առանձին տետրակներով ալ հրատարակուած են, կարդալու յարմար ամսագրին տետրակները ժողովրդին մէջ տարածելու նպատակով։*)

Երկրաշարժ Փոքր Ասիոյ մէջ

Խարբերդէ կը գրեն թէ այս ամսի սկիզբները երկու անգամ երկրաշարժի սաստիկ ցնցումներ եղած են Խարբերդի նահանգին մէջ։ Երկրորդ ցնցումը բաւական սաստիկ եղած է որմէ յետոյ սաստիկ ուժգնութեամբ մի փոթորիկ եկած և չատ ծառեր արմատախիլ եղած են։ Երկրաշարժի սաստիկ ցնցումներ պատահած են նաեւ Մալաթիոյ և Արապկիրի մէջ։

ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅ ՄԷՋ

Այս մասին Ս. Մամաֆօրին հետեւեալը կը գրէ իր Կ. Պոլսի թղթակիցը։

«Վաւագոյն աղբիւրներէ քաղուած մի քանի տեղեկութիւններ կը հաղորդեմ ձեզ որոնք կը ցուցնեն թէ վերջերս ի՛նչ արտօնութիւններ խնդրուած են Հանրային չինութեան նախարարութենէն, երկաթուղիներու մասին։

Աքիսար գիծը։ — Պր. Ճօն Փելին այժմ դիմումներ կանէ կառավարութեան որ Ա-քիսա-Դամասկոս գծին պայմանագիրը փոփոխուի. այդ գծին արտօնութիւնը թէև իրեն տրուած կր, բայց այժմ դադրեր է զօրութիւն ունենալէ։ Հանրային չինութեան նախարարութիւնը կը քննէ այժմ փոփոխուելիք կէտերը որոնք յատկապէս արտօնատէրը ներկայացուցած է։

Մուտանիա Պրուսայի գիծը.—Մայրաքաղաքիս Օտ. կայս. Պանքան վերջերս իմացուց Հանրային չինութեան նախարարութեան թէ 500,000 ֆրանք դրամագլուխ օսմանեան ընկերութիւն մը կազմուեր է այդ երկաթուղի չինելու համար։ Հանրային չինութիւնների նախարարութիւնը մօտ օրէն այդ ընկերութեան կանոնագիրը Դատական նախարարութեան պիտի հաղորդէ ի քննութիւն։

Սամսոն-Սեբաստիոյ գիծը.—Այս գծի արտօնութեան վերաբերեալ բոլոր թղթերը երէկ ղրկուեցան Հանրային չինութիւնների նախարարութեան։ այդ գծի արտօնութիւնը տրուած է Պաուօն Մաքառի։ Հաւանօրէն Հանրային չինութիւնների նախարարն և Պաուօն Մաքարի լիազօր ներկայացուցիչ Պր. Լէշան այս շաբաթ վերջնականապէս իրենց ստորագրութիւնները պիտի փոխանակեն պայմանագրի մասին։

Կ. Պոլիս-Կեսարիոյ գիծը.—Պր. Սթանիֆօր որ այս մասին դիմումէ արած է, հետեւեալ ծրագիրը ներկայեր է։ Անատոլուի երկաթուղւոյ ոեւէ մէկ որոշեալ կէտէն երկաթի գիծ մը երկարցնել այն արտօնութեամբ որ այդ գիծի մէկ ծայրը Իզմիտի կամ Կ. Պոլսի հետ միանայ, մէկ ծայրն ալ Ատափազար, Հէնտէք, Պոլու, Զանկըր, Եոզղատ հանդիպելով կեսարիա հասնի։

Իր առաջարկած պայմաններն հետեւեալներն են.

1. Կառավարութիւնը իւրաքանչիւր քիլօմէտրի վրայ 10,000 ֆրանք ղուռս հասոյթի ապահովութիւն տայ։

2. Երբ գծի ամբողջ հասոյթը բաւականայ շահագործման ծախքերն հանելու, այն ատեն կառավարութիւնը յիշեալ երաշխաւորութենէն ազատ լինի։

3. Հասոյթի առաւելութիւնը երկու հաւասար մասով պիտի բաժնուի ընկերութեան և թիւրք կառավարութեան։

Այս խնդրագիր Հանրային չինութեան նախարարութեան ճեռնհաս ճիւղին մէջ քննութեան ենթարկուած է այժմ։

Եոմուրթալըգ-Տիգրանակերտի գիծը. — Պր. Լըթալ, Կ. Պոլսի Տէրքօսեան Ջրի ընկերութեան նախկին տնօրէնը որի ճարտարապետական տաղանդը յայտնի է արդէն, վերջերս նոյն նախարարութեան ներկայեր է խնդրագիր մ'որ արտօնութիւն տրուի իրեն՝ կանոնաւոր գծով մի երկաթուղի չինել Այասի ծոցին (Կիլիկեան ծովափ) քով գտնուող Եուժուրթալըք կոչուած տեղէն մինչեւ Տիգրանակերտ. այդ գիծ պիտի կրնայ նաեւ ապագային ճիւղեր ունենալ դէպի Մարաշ, Այնթափ, Ուրֆա, Արղանա և Խարբերդ։

Այս խնդրագիրն ալ այժմ կը քննութեան առնուի իր և Ֆիվիլ Ֆրանսական մի ընկերութեան անունով ուղած է արտօնութիւնը։»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ԷՔԻՋԵԱՆ

Թարգման-առաջնորդ ճամբորդներու

Մարսէյլ հանդիպող հայ և արեւելցի ուրիշ ուղեւորներ որոնք քաղաքին և ֆրանսերէն լեզուին անծանօթ են, մեծ դիւրութիւններ կրնան գտնել իրեն դիմելով։

Grégoire Ekizian
5 A, rue Beauvau, 5 A, Marseille

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմենիա խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Արժէքը կանխիկ վճարուած՝ դիրք չղրկուիր։

Ա. ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (*Սպառած*)։
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱԳԵՏԱՑ (*Պուլղար ազգին իր ազատութիւն ձեռք բերելու համար մեկ դարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է։*) (1 ֆր. 10 *սթմ.*) 1 ֆր. 50 *սթմ.*
Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(*Հայաս-*

տանցիներուն պանդխտութեան տխուր հետեւանքներուն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։) Գինն (90 *սնթմ.*) 1 ֆրանգ 20 *սնթմ.*

Զ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենի ուարտեղուց (*Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 32՝ առանձին տետրակով հրատարակուած են*)։ 50 հատը 2 ֆր. և 50 *սանթիմ*, հատը (5 *սնթմ.*) 10 *սանթիմ*։

Է. ԼԻՆՉԻ ՕՐԷՆՔԸ ՏԱՃԿԱՀՈՑԱՍՏԱՆՈՒՄ. (*Սպառած*)

Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (*Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։*) Գինն 50 *սանթիմ* (35 *սանթիմ*)։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՎՐԷԺ

Թարգմանեց Ռուսերէնից
Ա. Ե.

Ինչ որ այսօր Թիւրքերն կանեն Հայաստանի մէջ և անել կուտան Քիւրդերին, նոյնը և աւելին կանէին նաև Պուլկարիոյ մէջ մինչև որ Պուլկարներն ազատուեցան այդ բարբարոսների լուծէն և ունեցան իրենց ազգային կառավարութիւն։ Թրքական բռնաբարութիւնների մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ ՎՐԷԺԸ որ ցոյց կուտայ նաև թէ Պուլկարներն այն ատիճան նեղուած էին քաղաքներէ և գիւղերի մէջ որ յանձն կառնէին մինչև իսկ լեռներն քաշուելով ապրիլ և յարմար առիթն ներկայացած ժամանակ իրենց վրէժ լուծել Թիւրքերէն։

ՎՐԷԺի գինն է 20 *սնթմ.* (15 *սնթմ.*

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԼԱՔԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներու պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպանուած և անհետացած է աշխարհէ։ Գինն 1 ֆրանգ, (75 *սանթիմ*)։

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերուն վրայ մասնաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովը։

ԺԱ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ԹՈՄԱՍ ԲՈՅԱՐԻՍ

(Ցուցական պատմութիւնից)

ԳՐԵՑ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

Ասկէ գրէթէ 5 դար յառաջ երբ Թիւրքերն տիրապետած էին յունական Սիրա կղզուն, իրենց սովորութեան համեմատ ամեն չարիք կը հասցունէին Յոյներուն, ծանր տուրքերով կը նեղացունէին, անոնց ստացուածները կը կողոպտէին, կիներն ու աղջիկներն կը բռնաբարէին և այլն։ Թոմաս Բոյարիս անուն մի նաւավար և ձկնորս, մի ազգասիրական պատանի որ սակայն հարուստ էր աղնիւ զգացումներով, կղզուն մահմետական կառավարչէն իւր քրոջ ազատագնելուն համար գրգռուած, ոգեւորուած, կը յաջողի ինք եւս գրգռել Սիրայի արդէն դժգոհ յոյն ժողովուրդը որոնք կը յարձակին կառավարչի պալատին վրայ, կը լինչեն Թիւրք չարագործները և օգուտ քաղելով Թիւրք կառավարութեան այն ժամանակի խառնաշփոթ դրութենէն, ապստամբութիւն կը հրատարակեն, մի քանի կռիւներ կունենան իրենց վրայ ղրկուած Թիւրք զօրքերին հետ որոնց կը յաջողին յաղթել Թոմաս Բոյարիսի առաջնորդութեամբը և Բոյարիս ժողովրդի հաճութեամբը կը հրատարակուի կառավարիչ Սիրայի։

Գին (15 *սանթիմ*) 20 *սանթիմ*։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Բաֆֆի, Հայ կինը եւ Հայ երիտասարդութիւնը 5 ֆր. 25 *սնթմ.*։

Բաֆֆի, կայծերի վերջը 1 ֆ. 75 *սնթմ.*։

Ծերենց, Թեոդորոս Ռշտունի 3 ֆրնք. 50 *սանթիմ*։

Հ. Առաքելեանց, Պատմութիւն Խաչակրութեանց և Թագաւորութեանն Երուսաղիմայ 2 ֆրանգ

Նիկոլ կամ դարձ Հայոց Եւրոպիոյ ի կաթոլիկութիւն 1 ֆր.

Շարժումն Հայաստանի (L'Arménie en mouvement). *Մայր Հայաստանի պատկեր* 1 ֆրանգ

ՀԱՅ ՊԱՏՄԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԸ

1878ին Պէրլինի գնացած Հայ պատուիրակութեան պատկերը՝ գեղեցիկ թղթի վրայ առնուած և պատուիրակներուն անուններն հայերէն և ֆրանսերէն տառերով միանգամայն տպագրուած, կը ծախուի Արմենիա խմբագրատունէն։ Գինն է 1 ֆրանգ, փոստի ծախքն խմբագրատունէն վճարուելով։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի

Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.